PRESS RELEASE

PR22/136

ԱՄՀ Գործադիր խորհուրդն ավարտում է Հայաստանի «Պահուստային ծրագրի» շրջանակում վեցերորդ և վերջին ամփոփիչ ստուգումը

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

- Եռամյա «Պահուստային ծրագրի» (SBA) շրջանակում պահպանվել է բարձր կատարողականը՝ չնայած մի շարք ներքին և արտաքին ցնցումներին:
- 2021 թ. ուժեղ վերականգնումից հետո կանխատեսվում է, որ աճի տեմպը կդանդաղի և գնաճի բարձր մակարդակը կպահպանվի՝ ծանրացած լինելով Ուկրաինայի պատերազմի տարածվող ազդեցություններից:
- «Պահուստային ծրագրի» վեցերորդ և վերջին ամփոփիչ ստուգման ավարտը իշխանություններին 25.716 միլիոն ՓՀԻ (շուրջ 35 միլիոն ԱՄՆ դոլար) ներգրավելու հնարավորություն կտա՝ ծրագրի շրջանակում ընդհանուր հատկացումները հասցնելով 308.8 միլիոն ՓՀԻ-ի (շուրջ 415 միլիոն ԱՄՆ դոլար):

Վաշինգտոն, ԿՇ –ապրիլի 29, 2022 թ.: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր խորհուրդն ավարտեց Հայաստանի հետ «Պահուստային ծրագրի»(Stand-By Arrangement) շրջանակում վեցերորդ և վերջին ամփոփիչ ստուգումը: Ամփոփիչ ստուգման ավարտը իշխանություններին 25.716 միլիոն ՓՀԻ (շուրջ 35 միլիոն ԱՄՆ դոլար) ներգրավելու հնարավորություն կտա՝ Հայաստանի եռամյա «Պահուստային ծրագրի» շրջանակում ընդհանուր հատկացումները հասցնելով 308.8 միլիոն ՓՀԻ-ի (շուրջ 415 միլիոն ԱՄՆ դոլար): «Պահուստային ծրագիրը» ԱՄՀ Խորհրդի կողմից հաստատվել է 2019 թ. մայիսի 17-ին և ընդլայնվել 2020 թ. մայիսի 18-ին (տե՛ս թիվ 19/173 և թիվ 20/219 մամուլի հաղորդագրությունները (Press Release No. 19/173 և Press Release No. 20/219): Գործադիր խորհրդի որոշումն առանց նիստի է կայացվել:[1]

Եռամյա «Պահուստային ծրագիրը», որը հաստատվել է 2019 թ. մայիսին, ավարտվում է 2022 թ. մայիսի 16-ին՝ սույն ամփոփիչ ստուգման եզրափակումից հետո: Չնայած անցած երեք տարիներին տարբեր ներքին և արտաքին ցնցումներ տնտեսությանը հարված են հասցրել՝ ծրագրով կատարողականը բավարար է եղել և կարևոր կառուցվածքային բարեփոխումներ են առաջ մղվել:

Հայաստանի տնտեսության վերականգնումը շարունակվել է 2021 թ. և 2022 թ. սկզբին, հիմնականում իշխանությունների՝ տնտեսության կառավարման ջանքերի շնորհիվ: Նրանք քաղաքականության իրականացման բարձր տեմպը համառորեն պահպանել են և մնացել նախաձեռնող՝ քաղաքականությունը չնախատեսված զարգացումներին համապատասխան ճշգրտելու համար: Ընդհանուր առմամբ, եռամյա ծրագրի ընթացքում իշխանություններն առաջ են մղել կարևոր կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ, այդ թվում՝ բարելավելով հարկային կարգապահությունը, կատարելագործելով բյուջետային գործընթացը, ամրապնդելով գնաճի նպատակադրման համակարգը և աջակցելով ֆինանսական ոլորտի կայունությանը, ինչպես նաև իրականացնելով կառավարման ամրապնդմանը,

[1] Գործադիր խորհուրդը որոշումներ է կայացնում քննարկում չնախատեսող ընթացակարգով, երբ Խորհրդի համաձայնությամբ առաջարկությունը կարող է դիտարկվել առանց պաշտոնական քննարկումներ հրավիրելու:

թափանցիկության խթանմանը և կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված բարեփոխումներ: Ճկուն փոխարժեքն ավելի արմատացած է երկրի քաղաքականության շրջանակում: Իշխանությունները մշակել են նաև միջնաժամկետ հավակնոտ բարեփոխումների ծրագիր, որը հաջողությամբ իրականացվելու դեպքում կարող է ավելի բարձր և ավելի ներառական աճի հանգեցնել:

2022 թ. տնտեսական հեռանկարի վրա ազդում է բարձր անորոշությունը՝ պայմանավորված Ուկրաինայի պատերազմի ազդեցությունների տարածմամբ: Չնայած 2022 թ. սկզբի բարձր իմպուլսին, այս տարի կանխատեսվում է տնտեսական աճի տեմպի դանդաղում մինչև 1.5 տոկոս, հիմնականում սպառման նվազման և առևտրի կրճատման հետևանքով: Սպասվում է, որ բարձր գնաճը կպահպանվի՝ ներմուծման, մասնավորապես՝ սննդամթերքի և նավթի բարձր գների հաշվին, իսկ ընթացիկ հաշիվն ակնկալվում է, որ կընդլայնվի՝ ցնցումներին համապատասխան տնտեսության ճշգրտմանը զուգընթաց: Այս առումով, ՀՀ ԿԲ կողմից քաղաքականության վերջին խստացումը գնաճային ճնշումները զսպելու և գնաճի սպասումները խարսխելու բարձր հանձնառության ազդանշան է: Շարունակվող վերահսկողական նախաձեռնությունները կօգնեն նաև ֆինանսական կայունության պահպանման հարցում: Հարկաբյուջետային հնարավորությունները (տարածքը) անհրաժեշտ է շրջահայց օգտագործել՝ տնտեսության վրա Ուկրաինայի պատերազմի անբարենպաստ ազդեցությունը մեղմացնելու համար՝ միաժամանակ շարունակելով օժանդակել հարկաբյուջետային կոնսոլիդացմանն ուղղված իշխանությունների ջանքերին:

Աղյուսակ 1. Հայաստան՝ ընտրված տնտեսական և ֆինանսական ցուցանիշները 2019–27 թվականներին

	2019	2020	2021	2022	2023	2024	2025	2026	2027
	Փաստ.	Փաստ.	Փաստ.	Կանխ.					
Ազգային եկամուտ և գներ									
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	7.6	-7.4	5.7	1.5	4.0	4.4	4.5	4.5	4.5
Վերջնական սպառման ծախսեր, նպաստումն աճին	10.7	-9.7	6.0	2.1	2.8	2.7	2.4	2.3	2.2
Համախառն հիմնական կապիտալի կուտակում, նպաստումն աճին	0.7	-1.4	1.2	0.4	1.7	1.8	2.1	2.2	2.3
Նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխություն, նպաստումն աճին	-3.9	0.4	-1.8	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում, նպաստումն աճին	0.2	3.4	0.4	-1.0	-0.5	-0.1	0.0	0.0	0.0
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ)	6,543	6,182	6,983	7,603	8,337	9,061	9,828	10,654	11,550
Համախառն ներքին արդյունք (միլիոն ԱՄՆ դոլար)	13,619	12,641	13,928	14,047	15,842	17,258	18,377	19,726	21,251
Համախառն ներքին արդյունք՝ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	4,597	4,267	4,701	4,741	5,347	5,824	6,201	6,656	7,170
ՍԳԻ (ժամանակահատվածի միջին, տոկոսային փոփոխություն)	1.4	1.2	7.2	7.6	6.0	4.3	4.1	4.0	4.0
ՍԳԻ (ժամանակահատվածի վերջ, տոկոսային փոփոխություն)	0.7	3.7	7.7	7.5	5.0	4.0	4.0	4.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոսային փոփոխություն)	1.0	2.0	6.9	7.2	5.4	4.1	3.8	3.7	3.7
Գործազրկության մակարդակ (տոկոս)	18.3	18.1	18.5	19.5	19.0	18.5	18.0	17.5	16.5
Ներդրումներ և խնայողություններ (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսայի արտահայտությամբ)									
Ներդրումներ	17.4	18.5	16.6	17.3	18.3	18.5	19.0	19.4	19.5
Ազգային խնայողություններ	10.0	14.7	12.9	11.0	12.4	12.5	13.1	13.6	13.7
Փող և վարկավորում (ժամանակահատվածի վերջ)									
Փողի բազա (տոկոսային փոփոխություն)	8.8	18.3	17.1	7.0	4.1	6.0	7.4	8.4	7.5
Փողի զանգված (տոկոսային փոփոխություն)	11.2	9.0	13.1	5.8	6.4	9.7	7.4	8.4	7.3
Մասնավոր հատվածի վարկավորման աճ (տոկոսային փոփոխություն)	18.5	14.3	-3.9	0.0	2.0	3.8	5.2	6.2	6.8
Կենտրոնական կառավարության գործառնություններ (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)									
Եկամուտներ և դրամաշնորհներ	23.9	25.2	24.1	24.5	24.9	25.2	25.3	25.7	25.9
Որից՝ հարկային եկամուտներ	22.1	22.0	22.1	22.3	22.6	22.9	23.1	23.5	23.8
Ծախսեր	24.9	30.6	28.7	28.5	27.8	27.4	27.2	27.1	27.1
Ընդհանուր հաշվեկշիռը՝ դրամարկղային սկզբունքով	-1.0	-5.4	-4.6	-4.1	-2.8	-2.2	-1.8	-1.4	-1.2
Պետական և պետության կողմից երաշխավորված պարտք (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)	53.7	67.4	63.4	67.7	65.1	63.9	62.0	59.7	57.3
Կենտրոնական կառավարության ՊՊԵ պարտք (տոկոս)	50.1	63.5	60.1	64.9	63.0	62.2	60.8	58.8	56.6
Արտարժութային պարտքի մասնաբաժինը (տոկոս)	80.6	77.0	72.7	70.5	68.8	66.8	65.5	65.1	66.0
Արտաքին հատված									
Ապրանքների և ծառայությունների արտահանում (միլիոն ԱՄՆ դոլար)	5,718	3,763	4,881	5,353	5,930	6,549	7,046	7,521	7,987
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (միլիոն ԱՄՆ դոլար)	-7,513	-5,019	-6,036	-6,685	-7,431	-8,142	-8,696	-9,246	-9,805
Ապրանքների և ծառայությունների արտահանում (տոկոսային փոփոխություն)	15.7	-34.2	29.7	9.7	10.8	10.4	7.6	6.7	6.2
Ապրանքների և ծառայությունների ներմուծում (տոկոսային փոփոխություն)	13.1	-33.2	20.3	10.8	11.2	9.6	6.8	6.3	6.0
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)	-7.4	-3.8	-3.7	-6.3	-5.9	-5.9	-5.9	-5.8	-5.8
ՕՈՒՆ (զուտ, միլիոն ԱՄՆ դոլար)	234	74	354	266	319	389	447	465	479
Համախառն միջազգային պահուստներ (միլիոն ԱՄՆ դոլար)	2,850	2,616	3,215	2,877	2,750	2,753	2,761	2,791	2,843
Ներմուծման ծածկույթ 1/	6.8	5.2	5.8	4.6	4.1	3.8	3.6	3.4	3.2
Ժամանակահատվածի վերջի փոխարժեք (դրամ՝ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց)	480	523	480.1	…	…	…	…	…	…
Միջին փոխարժեք (դրամ՝ մեկ դոլարի դիմաց)	480	489	501.4	…	…	…	…	…	…

Աղբյուրներ՝ ՀՀ իշխանություններ և Հիմնադրամի աշխատակազմի հաշվարկներ և կանխատեսումները:

1/ Համախառն միջազգային պահուստներն ըստ հաջորդ տարվա ապրանքների և ծառայությունների ներմուծման ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ (SDR):